

1.2.4. Շինարարություն

**Բնակարանային շինարարություն:** 2004թ. հունվար-փետրվարին հանրապետությունում բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 15863 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 74 նոր բնակելի շենք կամ 2003թ. հունվար-փետրվարին գործարկված մակերեսի 167.7%-ը: Մասնավորապես. Արարատի տարածաշրջանում՝ 550 և 3, Արտաշատի՝ 200 և 1, Գավառի՝ 240 և 2, Կոտայքի՝ 610 և 4, Նաիրիի՝ 938 և 1, Նոյեմբերյանի՝ 120 և 1, ք. Գյումրիում՝ 73 և 1, ք.Վանաձորում՝ 132 և 1 և ք.Երևանում՝ 13000 քառ.մ և 60 բնակելի շենք:

**Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերը**

	2003			2004		
	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%		ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	%	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	2374	79.4	3.3	4270	179.9	7.1
Փետրվար	7087	175.2	3.0անգամ	11593	163.6	2.7անգամ

2004թ. փետրվարին շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր (օգտակար) մակերեսի 100%-ն ամբողջությամբ շահագործվել է բնակչության միջոցների հաշվին (2003թ.՝ 33.2%):

**Իրականացված շինարարության ծավալը:** 2004թ. հունվար-փետրվարին հանրապետությունում իրականացվել է 7858.6 մլն.դրամի շինարարություն, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 3479.8 մլն. դրամի, իրականացված շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 6642.4 մլն.դրամ, որից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 2419.7 մլն. դրամ:

**Իրականացված շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2004թ. հունվար-փետրվարին**

Ֆինանսավորման աղբյուրներ	Իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %		Ընդհանուրի նկատմամբ, %	
			իրականացվել է շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է շինարարություն	այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքներ
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>7858.6</b>	<b>6642.4</b>	<b>95.8</b>	<b>108.3</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում ի հաշիվ՝</i>						
պետական բյուջեի	1019.9	991.2	105.6	107.3	13.0	14.9
համայնքների միջոցների	12.2	12.2	72.3	72.3	0.2	0.2
Զարգացման և վերակառուցման Եվրոպական բանկի վարկի	32.8	32.8	-	-	0.4	0.5
Համաշխարհային բանկի վարկի	799.7	718.6	141.0	190.1	10.2	10.8
մարդասիրական օգնության միջոցների	141.7	141.7	5.1	5.4	1.8	2.1
<i>դրանից՝</i>						
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	0.1	0.1	0.4	0.4	0.0	0.0
Հայ Առաքելական Եկեղեցու կողմից հանգանակված միջոցների հաշվին	141.6	141.6	3.3անգամ	3.3անգամ	1.8	2.1
կազմակերպությունների միջոցների	1572.7	670.9	78.1	168.1	20.0	10.1
բնակչության միջոցների	4279.6	4075.0	2.3անգամ	2.3անգամ	54.4	61.4

**Իրականացված շինարարության ծավալների աճի տեմպերը**

	2003			2004		
	իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	համադրելի գներով, %		իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)	համադրելի գներով, %	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակակետում	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակակետում	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	2972.7	156.2	9.4	2782.1	91.0	8.9
Փետրվար	5090.4	129.3	170.7	5076.5	99.2	186.4

2004թ. հունվար-փետրվարին իրականացված 7858.6 մլն.դրամի շինարարությունը 2003թ. հունվար-փետրվարի համեմատությամբ նվազել է 4.2%-ով: Եթե շինարարության աճի տեմպերի հաշվառման ժամանակ բացառել 2003թ. հունվար-փետրվարին «Լինսի» հիմնադրամի միջոցների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների ծավալը, ապա 2004թ. հունվար-փետրվարին շինարարական աշխատանքների տեմպը կկազմեր 140.7%, շինմոնտաժային աշխատանքներինը՝ 181.6%:

**Շինարարության ծավալներն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2004թ. հունվար-փետրվարին**

	Իրականացվել է շինարարություն, մլն.դրամ (ընթացիկ գներով)		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է շինարարություն	այդ թվում շինմոնտաժային աշխատանքներ
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>7858.6</b>	<b>6642.4</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում.</i>				
գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	310.6	232.1	3.9	3.5
հանքագործական արդյունաբերություն	7.0	7.0	0.1	0.1
մշակող արդյունաբերություն	172.9	62.9	2.2	0.9
էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	215.4	164.5	2.7	2.5
առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	1378.6	1174.0	17.5	18.3
հյուրանոցներ և ռեստորաններ	100.3	93.4	1.3	1.4
տրանսպորտ և կապ	1392.2	776.1	17.7	11.6
ֆինանսական գործունեություն	0.3	-	0.0	0.0
անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	3194.5	3124.2	40.7	46.7
պետական կառավարում	296.4	237.2	3.8	3.5
կրթություն	92.2	92.2	1.2	1.4
առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում	6.2	6.2	0.1	0.1
կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	692.0	672.6	8.8	10.0

**Վերանորոգման և վերականգնողական աշխատանքներ:** 2004թ. հունվար-փետրվարին հանրապետությունում Համաաշխարհային բանկի միջոցների հաշվին ք. Երևանում վերանորոգվել է 4751 աշակերտական տեղով 6 հանրակրթական դպրոց:

**Շինարարությունն աղետի գոտում**

**Բնակարանային շինարարություն:** 2004թ. հունվար-փետրվարին *երկրաշարժից տուժած* քաղաքներում և գյուղական վայրերում բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 325 քառ.մ ընդհանուր (օգտակար) մակերեսով 3 նոր բնակելի շենք կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 2.0%-ը:

**Շահագործման հանձնված բնակելի շենքերի աճի տեմպերը**

	ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	2003		ընդհանուր (օգտակար) մակերեսը, քառ. մետր	2004	
		%			%	
		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ		նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	նախորդ ամսվա նկատմամբ
Հունվար	354	62.2	0.9	132	37.3	9.1
Փետրվար	5007	4.3անգամ	14.1անգամ	193	3.9	146.2

2004թ. փետրվարին շահագործման հանձնված բնակելի շենքի ընդհանուր (օգտակար) մակերեսի 100%-ն ամբողջությամբ շահագործվել է բնակչության միջոցների հաշվին (2003թ.՝ 5.4%):

**Իրականացված շինարարության ծավալը:** Հանրապետության աղետի գոտում 2004թ. հունվար-փետրվարին բնակելի շենքերի, սոցիալական և արտադրական նշանակության օբյեկտների շինարարության, վերականգնման և վերանորոգման համար ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացվել է 508.7 մլն.դրամի շինարարություն կամ հանրապետությունում շինարարության ընդհանուր ծավալի 6.5%-ը, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների շինարարության գծով՝ 436.0 մլն. դրամ (12.5%):

**Իրականացված շինարարության հիմնական ցուցանիշներն ըստ ֆինանսավորման աղբյուրների, 2004թ. հունվար-փետրվարին**

	Իրականացվել է շինարարություն, մլն.դրամ ( <i>ընթացիկ գներով</i> )		Ընդհանուրի նկատմամբ, %	
	ընդամենը	<i>այդ թվում՝</i> շինմոնտաժային աշխատանքներ	իրականացվել է շինարարություն	<i>այդ թվում՝</i> շինմոնտաժային աշխատանքներ
<b>Ընդամենը</b>	<b>508.7</b>	<b>487.7</b>	<b>100</b>	<b>100</b>
<i>այդ թվում ի հաշիվ.</i>				
պետական բյուջեի	337.8	337.8	66.4	69.3
համայնքերի միջոցների	1.9	1.9	0.4	0.4
Համաշխարհային բանկի վարկի մարդասիրական օգնության միջոցների	64.1	64.1	12.6	13.1
<i>դրանից.</i>				
«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցների	0.1	0.1	0.0	0.0
Հայ Առաքելական Եկեղեցու կողմից հանգանակված միջոցների	2.2	2.2	0.5	0.5
կազմակերպությունների միջոցների	56.6	35.6	11.1	7.3
բնակչության միջոցների	46.0	46.0	9.0	9.4